

ՄՇԿԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլ. Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանից խմբագրատան մէջ.

Մեր հասցին. Тифлиς, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak»,
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ առն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է առանձին լեզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպեկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

ԲՆԴԱՆԴԱՅԻՆՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կիրակնօրեայ դրոշմը. Մի գերմանացու կարծիքը. Օգոստոսի ներկայացումները. Նամակ էջմիածնից. Նամակ Ուրմազուրից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Թիւրքիայից. Արաւելի լուրեր.—ԽԱՍՆ ԼՈՒՐԵՐ. Մանրանկար.—ՀԵՒԱ-ԳԻՐՆԵՐ.—ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱԿԻՆՈՐԵԱՅ ԶՐԵՑՑ

Երկու-երեք շաբաթ առաջ Թիֆլիսի Ներքին-օրերի տպագրատանը հրատարակւում էին լուրեր Սկզբից էր ուսումնական տարին, աշակերտները հաւաքվել էին իրանց ուսումը շարունակելու. բազմաթիւ երեխաներ, որոնց թիւը հաս- թիւներով պէտք է հաշուել, իրանց ծնողների հետ սպասում էին, թէ արդեօք իրանց էլ կը վիճակվի դպրոց մտնելու, այնտեղ ուսում առնելու բախտը.

Միայն այդ խեղճ ծնողների եւ խեղճ երե- խաների սպասողական, անհանգիստ, աղաչա- ւոր տեսքը սրբան հոգեւոր ու խորհրդածու- թիւներ էր յարուցում տեսողի մէջ. Ապ- րում ենք մի ժամանակում, երբ խաղաղ մի- րութիւնը, գոյութեան կոտոր, հարիւր ու հա- թիւ լեզու առած՝ ազգայնութիւն է. ճշմարտ- ից պիտի դուրսը մնան իսկ մնալ դրոշմը... Գիտե՛ք ինչ է նշանակում Օ՝, դա նշանակում է մնալ մութի եւ ցրտութեան մէջ, մի գիշեր- վայ մէջ ընկնել, որ վերջ չունի, որ այդպէս անլոյս ու մռայլ պիտի շարունակվի մինչեւ ան գերեզմանի ափը.

Մարաւ, տապալկովոյ այդ փոքրիկների բազ- մութիւնը պէտք էր խնամել, պատասխարել, պէտք էր նրան ապուրծն ու թուղթ տալ. եւ էլ ջանք ու քանի հոգեւոր ունէր Ներքինի դպրոցը, մօտ ութսուն տարիներ ընդունել այդ հիմնարկութիւնը.

Բայց դատելու, կարգադրելու տրամադրու- թիւն, այլապէս չէր մնացել. Ոչ ոք չէր գիտէր, թէ լալը ինչ պիտի լինի. Հոգաբարձութիւնը գլուխ էր կարգում անելանելի դրութեան մէջ. Ինչ անել. Հրաժարվել՝ սկզբունք, օրինակա- նութիւն պաշտպանած ինքնու համար. Թուում էր որ ուրիշ ելք չէր կայ. Թուում էր, որ պէտք է տեղի տալ, հեռանալ, ազատվել ամեն մի պատասխանատուութիւնից.

Ինչ անել, այս Մի ամբողջ տարի հոգա- բարձութեան գլխին զամօկեան արի պէս կախ- ված էր տեսական հարցը. Այդ հարցը խաղաղ ու օրինական ձեւով լուծելու բոլոր ջանքերը ապարդիւն անցան. Մի ինքնավար մարմին, իր կանոնադրութեան սահմաններում գործելիս, ամեն լայնում հանդիպում էր օսմանստիպակող, կաշկանդող մի նորութեան—հրամանի Միւսում էր դպրոցը թողնել հրամաններով կառավար- վելու փնտրելու եւ հեռանալու.

Սպասում էին ամենքը, ուսուցիչների մեծ մասը, հասարակութիւնը. Եթէ ընդունված լի- ներ այդպիսի մի փոքրիկ հարցի վերաբերմամբ գործածել զիջողատիպական լեզու, պէտք էր ստել թէ հորիզոնը, առնուազն, չափ մտայն էր եւ մեղմունք մեղք էր չէր լինի գործածել այդ բարձրագոյն ոճը. Ունենէր երկու-երեք խղճով հիմնարկութիւններ, որոնց նշանակութիւնը բուցէ միայն երեխաներին հարկաւոր լինի բա- ցաորէի եւ սակայն այդ ճար ու ճարգ հիմ- նարկութիւնների գլխին միշտ հաւաքված են խաղերի, փայտյալան կամայականութիւնների սեւ ամպերը. Դժբախտ Երեւանը ձեռք օրինակ- կարում էինք այնտեղից ստացվող տեղեկու- թիւնները եւ հազիւ հազ էինք կարողանում հաւատալ, թէ այդ բոլորը առապանքների աշ-

խարհից չէ վերցրած, այլ մեր իրականութիւ- նից.

Եւ ահա սպասում էինք, որ Թիֆլիսում էլ սկզբի մի եւ նոյնը Յիշում էք մանկական այն խաղը, որի մէջ գրի վերցրված երեխաները հետագայ իրանց միւս ընկերներին են կանչում. Երեւանն ու Երեւն էլ մեզ, Թիֆլիսեցիներին էին կանչում—«Թող գալ մեր ընկերը...»

Այսօր, սակայն, ուրիշ բան է. Ներքինի դպրոցի վրա երկինքը պարզ է. Խաղաղութիւն է տրուում ներսում, պարագմունքները շարու- նակվում են եւ դպրոցական խաղաղ կեանքին ոչինչ ցնցում, ոչինչ խլրտում այլ եւս չէ սպասում. Բաժակը անցաւ, դպրոցում փո- թորիկներ յարուցանելու տեղում վառվածները կախ են արել իրանց հայկական քիւրերը. Տես- չական հարց այլ եւս չէր կայ. Վերջապէս, գոնէ մի անգամ, յարգելից ժողովրդական ներկայա- ցուցչութեան ձայնը, իրաւունքը.

Երեւոյթը կարող էր փոքր համարել. բայց— ինչու թագցնել—նա լոյսի մի շող է, որ մտաւ մեր անմխիթար իրականութեան մէջ.

Ներքին չը կարծէր, թէ էս յափշտակվում եմ. Ո՛հ. Ես չափ լաւ գիտեմ, որ մեր եկեղե- ցական գործերի վարչութեան մէջ ամեն ինչ երբեք է, եւ հաւատալ մի կարգադրութեան տեւողականութեան՝ կը լինէր մի մեծ մտադու- թիւն. Այս այսպէս է, դժբախտաբար. Բայց եւ այնպէս, ես ուրիշ բանի չեմ կարողանում նմանեցնել օրվայ նորութիւնը, եթէ ոչ լոյսի մի շողի, որ խուժում է մի մութ տարածու- թեան մէջ.

Փոքրիկ, չափ համեստ, գուցէ թոյլ ու ան- հաստատ լոյս է, բայց նա արդէն իր բանն ա- րում է. Ինչ է անում լոյսը. Պարզապէս այն, որ լուսավորում է առարկաները, իբրեւ.

Նա լուսավորեց, հրապարակ հանեց մի մեծ բան, այն, որ մեր վերջին տարիների դժբախտ անցքերի մէջ գլխաւորը ինտրիգն էր. Այդ եթէ լուսավորեց հրէշի գոնէ մի գլուխը այժմ ջախջախվեց. Յայտնի դարձաւ, որ ոչինչ վը- տանք չը կայ, եթէ մեր թեմական դպրոցները շարունակեն իրանց գոյութիւնը ճառատաւ տարուց ի վեր գործող կանոնադրութեան ոգով.

Առաջապանք էին հնարվել. պատմվում էին զանազան սարսափներ, պատմվում էին հեղի- նակաւոր լրջութեամբ, չլուկներով Այժմ աւե- լի քան պարզ է, որ այդ առաջապանքները եթէ ունեցել են մի հեղինակ՝ դա միայն ինտրիգան է. Ինտրիգան, որի սեւագգեւտ հերոսները մի քանի անհամեստ էին.

Ո՛րքան ուժեղ, բարձրագոյն ու համարձակ էր այդ սեւ ուրուականը. Նա անպատիժ էր, նա անհերքելի էր. Բայց ինչ հակադրական բը- րբով, դեւային շարահանութեամբ ծաղրում էր մեզ. Մտադրում էր, ցեխի մէջ էր տրուում ժողովրդական ուղղութիւնը. Ինչ ժողովուրդ, ինչ իրաւունք, ինչ կանոն ու կարգ. Ամեն ինչ մերն է, եւ մեր ճիւղներից ոչինչ չեն կարող ազատել ոչ ձեռք բողոքները, ոչ սպառ- նալիքները, ոչ լաքն ու կոծը.

Եւ ճիշտ որ ամերականացի էին այն խաւար ոյժերը, որոնք միայն էին անհերքելի ինտրի- գայի մէջ. Միմեանց ետեւից խլվում, դէն էին գցվում այն ամենը, ինչ ժամանակի, շատ եր- կար ժամանակի ընթացքում ժողովրդի ինքնա- վարական արածութիւններն էր կազմում. Ժո- ղովուրդ, որ կազմում է եկեղեցի. Այս դարա- տը իրականութիւնը դարձել էր փետրահան արած մի հաւ, որ հասարակ աղէտ բոլորովին տկուրեցիկ էր, եւ ինտրիգան պատասխան էր նրա վերջին փետուրները պոկել, միտք ծը- ւատել.

Բայց թանձր սեւ վարագոյրի միջով մի փոքրիկ շող ներս թափանցեց, եւ մարդկանց աչքերի առաջ երեւաց ինտրիգան իր ճիւղայն- ինչ կերպարանքով. Ահա ով է անողը. Նոր միայն իմանում ենք...

Եւ դա չափ լաւ բան է. Ապագայ պատմա- գիրը սրբան շնորհակալ պիտի լինի այդ փոք- րիկ լոյսից. Այդ պատմագիրը այլ եւս չի մնալ չուարած, այլ եւս գլուխ չի պատռի մեր ժա-

մանակի երեւոյթները հասկանալու համար. Հայոց կաթողիկոսութեան պատիւը փրկելու համար նա կունենայ այն առաջնորդող ճշմար- տութիւնը, որ կար ինտրիգաւ Դա էլ բան է, դա էլ չնորհաւորութեան արժանի երեւոյթ է...

Յամանայն դէպ, մեծ սկզբունքը—տարաւ իր յաղթանակը. Եւ ես չեմ կարող ամբողջ արտից չորսխանալ ինձ համար պարզ է այն խաւարը, որ բերում է այս դէպքը. Իրաւունք ունենալ եւ իրաւունք չը պաշտպանել—դա վայել չէ մի ժողովուրդի, որ փոքր է շատէ հասկացողութիւն ունի բարօրութեան, առա- ջադիմութեան մասին.

Ես չը գիտեմ, սրբան գիտակից է մեր ժո- ղովրդի ամբողջ այս ճշմարտութեան. Բայց ժողովրդի առաջաւոր մասը—եթէ միայն նե- րքի է այդպիսի անակառնով պատուել այդ մասը—կորցրել է այդ հասկացողութիւնը. Խղճով ժամանակի խղճով զաւակներ են ա- տալ եկել. նրանք էսթէտիկներ են, նրանք դէ- կացեաններ են, նրանք կարողացող են, երգող են, նույն-իսկ գրող են, բայց ոչ հասարակական գաղափարներով լցված մարդիկ, ոչ մարտնչող- ներ, ոչ նոյն-իսկ մտածողներ. Մի ամբողջ շրջան մարդկանց, բազմազան տիկնիկներից, տղամարդիկներից, երիտասարդներից եւ օ- ռիորդներից, կարող է մի որեւէ սալօնում հինգ—վեց ժամ լարված ուշադրութեամբ խօ- սել ու դատողութիւններ անել մի օգեւորային կամ օգեւորատու ներքին, երգչուհու մասին, բայց երկու բառէ անգամ չէ կարող մտադի- ժողովրդի որեւէ գործի, որ եւ է իրաւունքի մասին.

Մենք էսթէտիկներ ենք. Հասցրել ենք մեր ճշմարտերը եւ դեռ էլի կը հաջեցնենք նորու- թիւնների բարձր գաղափարներ. մենք ըմբռ- նողներ ենք, վերլուծողներ ենք, հիացողներ ու վրդովնողներ ենք՝ միայն էսթէտիկայի աշ- խարհում. Իսկ մեր հասարակական իդէալները օր օրի վրա անապատ են դառնում, եւ այդ անապատներում միայն շաղկապ են վայրենի կատուներն են իրանց ձայնը հնչեցնում.

Եւ այդտեղի, այդ անկենդան անապատի տե- ւարաններից ոչ մէկը չէ կարող զարմանք ու անհանգստութիւն պատճառել հողով ու մտքով էսթէտիկայի խորքերը սուզված մեր «առաջա- տը մասին» Այդ վայրենացած անապատում է ինտրիգան այնքան ուժեղացում, այնքան ան- պատիժ դառնում, որ սկսում է քանդել ու ոտի տակ տրորել ամեն մի օրինաւոր սկզբունք, ծաղրել անպաշտպան ժողովրդական իրաւուն- քը. Այդ անապատում է, որ տապաքրական խօս- քը հասնում է այն աստիճանի լրջութեան, որ պահանջում է օճիպանքի ժողովրդական ներկայ- ացուցչութիւնը, հոգաբարձական մարմինները եւ ամեն ինչ յանձնել ինտրիգայի կամայակա- նութիւններին.

Այս բոլորը ոչինչ է չորի, կեր ու խումբի եւ այլ վայելչութիւնների էսթէտիկական նորու- թիւնների մէջ խրվածների համար. Ինչ-որ հա- սարակական հարց, ինչ-որ պայքար իրաւունք- ների համար. Աստուած իմ, սրբան աննորաշ- նակ ձայնը եւ մի մի անգամ մտնում էսթէ- տիկայի տաճարները.

Ո՛ր ժամանակներում ենք, ընթերցող. Մեր ամբողջ միտքը, մեր հակումները, մեր տրամադրութիւններն են անապատներ տարա- ծում մեր կեանքի մէջ եւ այդ անապատնե- րում տնկում եթէ չլինանի միայն—ինտրիգան.

Ահա ինչքան բան անակառնեց Ներքինից. դպրոցի փոքրիկ դէպքը. Նա փոքրիկ է, այդ ինչ մեծ բան կը լինէր, գոնէ ինտրիգայի հա- մար, եթէ հեռանային հոգաբարձութիւնը. Առա- ջին, երկրորդ թէ երրորդ դէպքը կը լինէր դա մեղմունք. Այնքան հեշտ, այնքան սուղորական բանը մի անգամ, գոնէ մի անգամ տեղի չու- նեցաւ. Եւ սրբան բան բացվեց.

Մենք առանց նրա մէջ մեր սեփական թու- լութիւնը, մեր առաջապանքն անուշադրու- թիւնը. Կը խրատվենք զրանից. Կը հասկա- նանք, որ ընտրողական իրաւունքը պէտք է ոչ միայն ունենալ, այլ եւ պահել պահպանել.

Զեմ կարծուե՛ք Խանութներ, խոհանոցների էսթէտիկայի ժամանակներն են. Հասարակա- կան պարտաւորութիւններ. Ահ, ինչ գոհակու- թիւն...

Դուք ինչ էք սպասում այսպիսի սերուն- դից...

Լ.

ՄԻ ԳԵՐՄԱՆԱՑՈՒ ԿԱՐՏԻՔԸ

Բերլինում հրատարակվող «Գրականական Արձագանք» (Das literarische Echo) կիսամ- սեայ հանդէսը իր այն բաժնի մէջ, որ վերա- բերում է օտարերկրեայ գրականութեան տե- սութեան՝ «Գրասիրական, ուսական, շէյնցա- րական, ամերիկական նամակներ» վերնագրով, մտքել է եւ հայկական նամակներ» վերնա- գրով մի բաժնի, նուիրված հայ ժամանակակից գրականութեան ուսումնասիրութեան. Սեպ- տեմբերի երկրորդ համարում տպված է այդ վերնագրի տակ Արաիւր Լայստի մի յօդուածը. Գէորգ Բարխուդայանի թարգմանութիւնների մասին, «Ճառագոյն» թարգմանութեան առի- թով. Արաիւր Լայստ, յանձնի Բարխուդայանի- ցի, ողջունում է ոչ միայն Գէորգին լաւ ճա- նաչող եւ յարգող, այլ եւ մի բանաստեղծ եւ թարգմանական արուեստի վարպետ, որ մեծ հատկութեամբ աշխատել է ծանօթացնել իր հայ- րենակիցներին գերմանական կեանքի, բանաս- տեղծութեան եւ մտածողութեան խորութեան հետ. Արաիւր Լայստ խօսում է ապա Բարխու- դայանից Շիլլերից արած թարգմանութիւննե- րի մասին, ասելով, որ Շիլլերը եղել է Բար- դայանիցի օրերեցալ բանաստեղծ մինչեւ նրա ծերութեան հասակը, որովհետեւ նա թարգմա- նել է նրա գրեթէ բոլոր գործերը, այն-ինչ Գեո- թէից թարգմանել է այժմ միայն «Ճառագոյն», իսկ Լէսինգից—«Նաթան իմաստունը» Բար- խուդայանի այդ ընտրութիւնը, առում է Լայստ, նշանաւոր է ոչ թէ թարգմանչի անձ- նական ճաշակի պատճառով, այլ մանաւանդ հայ ժողովրդի համար. Այդ ժողովուրդը առա- ջաւոր Ասիայի բոլոր ազգերի մէջ ամենից շատ ծանօթ է, եւ ամենից շատ լաւ պատրաստված մտաւոր աշխատութեան համար. Բայց նա սաստիկ նիւթական է, եւ վերացական մտածու- ղութիւնը նրա մէջ մինչեւ այժմ չափ սահմա- նափակ կերպով է զարգացած. Հայկական փի- սոփայութիւնը մի գործնական կեանքի փիլի- սոփայութիւն է, հաստատ նիւթական հիմունք- ներով եւ նա վերացական գաղափարների մէջ մտնում է միայն՝ երբ խնդրը կրօնի է վերա- բերում. Նորապէս հայ վիպական գրականու- թեան մէջ փիլիսոփայութիւնը անտես չէ ան- վում աւելի կամ նուազ մատերիալիզմի ձեւով. Բայց իբրեւ առանձին գիտութիւն՝ նա ամենե- ին չէ մշակվում. Մի քանի կրօնա-բարոյական գործեր հրատարակել են Միխայիլանները, եւ Բերբերեանը Կ. Պօլսոնը գրել է շատ գրքեր էթիկայի մասին, բայց դրանք շատ քիչ են կարդացվում.

Հ. Ա.

ՕՊԵՐԱՑԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

Օպերային խումբը ուրախ, ամսին 20-ին, վրաց ազնուականների թատրոնում տուեց Չայ- կովսկու «Փիքովա Դամա» օպերան.

Այս անգամ մասնակցողները նոր ոյժեր էին. Լիզայի դերում հանդէս եկաւ օր. Զօրինան, որ ընդհանրապէս նպատաւոր տպաւորութիւն թողեց, մանաւանդ երկրորդ տեսարանում, երբ Լիզան իր տխրութեան եւ արտասուքի պատ- ճառներն է յայտնում, թէ սիրահարված է Գեր- մանի վրա եւ վախենում է պատկիւ իշխան Ելեգիու. հետո թոյլ էր երրորդ գործողութեան երկրորդ տեսարանում, երբ Լիզան անհամար- սպասում է Գերմանին ձեռնադրելու ջրուղու մօտ եւ իր հոգեկան յոգնածութեան մասին է զանգա- տում. յայտնի արիւն նա անգոյն անց կացրեց. Առհասարակ այդ գիշերվայ օպերայի հերոսը երիտասարդ երգիչ Բոնաչիգն էր, որին ի

արտել կարող ենք չնորհաւորել ունեցած աջո-
ղութեան համար Գերմանիոյ դերում, այդ դերը
պարտին թէ՛ ձայնին եւ թէ՛ խաղին շատ է հա-
մապատասխանում Նրա ուժեղ եւ մետալանը-
չին, ձայնը սկզբից մինչեւ վերջ զեղեցիկ էր
Շատ լաւ տարաւ երկրորդ տեսարանը՝ երբ
Գերմանիոյ երեւում է Լիզային եւ խնդրում է
նրան լսել իրան եւ բացատրում է իր սէրը-
մեծ ճաշակով երգեց կոմպոզիտ Ննջարանում,
երբ Գերմանիոյ ուզում է երեք թղթի գաղտնի-
քը իմանալ Վերջին տեսարանում, երբ ուրա-
խացած իր տարած փողերով Գերմանիոյ իր
կարծիքն է յայտնում կեանքի ունայնութեան
մասին՝ յայտնի արիւն «Сегодня ты а завтра я»
արժանացաւ ժողովրդի բռն ծափահարու-
թեան եւ կրկնեց Լիզայի երգը՝ պարտին տես-
նել միւս գերերումը

Դորժանակայան Պոլինայի եւ կոմպոզի-
տորում ապացուցեց որ տաղանդաւոր երգչու-
հի է նա լաւ երգեց երկրորդ տեսարանի մե-
լամագծոտ բոմանը—«Подруги мои» Տիպի-
ական էր կոմպոզիտ գերում, երբ Ննջարա-
նում բազմաթիւ փոքր նուագ ֆրանսերէն լե-
զուով մեղմ երգում էր Օր. Արցիբաչեան (Պրի-
լեպոյի դերում) ունի դուրեկան եւ մետալանը-
չին ձայնը Սերգեյեւը Տոմկու դերում ցոյց
տուեց իր զօրեղ եւ հնչուն ձայնը, թէպէտ
այդ դերը նշա ձայնի համար բարձր է գրված
Թոյլ էր Ելեգիլու դերում Սուսանովը, նա անյա-
ջող երգեց սիրուն եւ յայտնի արիւն «Я вас
люблю»:

Ա. Մամաջան

ՆԱՄԱԿ ԷԶՄԻԱՆՆԻՑ

Սեպտեմբերի 8-ին

Գէորգեան ճեմարանի նոր տնօրէն պ. Կ.
կոստանեանը արդէն եկել է Եմբիածին եւ մտնել
է իր պաշտօնի մէջ:

Ինչպէս տեսնում ենք, ճեմարանի սւռումբ
այս տարի եւս սկսվում է առաջվա պէս Վա-
ղուց արդէն սկսված են վերաքննութիւնները
եւ նոր մտնող աշակերտների ընդունելութիւնը,
բայց մինչեւ այժմ ոչ վերջացած են եւ ոչ իսկ
հաստատուպէս որոշված ընդունվածների եւ
չընդունվածների վիճակը:

Արձակուրդների ժամանակ յայտնված էր, որ
այս տարի նոր ընդունելութիւն չէ լինելու
ճեմարանում, սակայն ընդունելութիւն լինում
է եւ ընդունվածներ են ենթադրվում ոչ թէ բոլոր
խնդրատուները, այլ ընտրութեամբ, միւս
խնդրատուները, որոնց չեն ուզում ընդունել
ոչ այնքան կտրած կը հեռանան Եմբիածին:

Նոյնն է կատարվում եւ ուսուցչական
խմբի կազմակերպութեան մէջ, Դեռ եւս
արձակուրդների սկզբում, երբ նոր տնօրէն
պ. Կ. կոստանեանը եկաւ Եմբիածին իր
տեսչական պայմանը կապելու, անցեալ ու-
սուցչական տարվայ ուսուցչական կազմից նա
հեռացրել էր երկու սուցիչներին՝ պ. Ս. Յարու-
թիւնեանին եւ Գ. Ղազարեանին, իսկ միւսներին
թողել էր իրանց՝ պաշտօնում, պակասեցնելով
միայն ռոճիկները: Այժմ այս երկու հեռացված
ուսուցիչները մնում են կրկին իրանց պաշտ-
ոնում: Իսկ ընդհակառակը հեռացված են հա-
մարվում եւ չեն հրաւիրվում պ. պ. Արեգեանը
եւ Արարամեանը, երկուսն էլ իրանց առարկան
լաւ անցնող ուսուցիչներ:

Իրանց կամքով հեռացել են ճեմարանից պ.
Ս. Տիգրանեանը, որ ճանաչված էր որպէս ըն-
դունակ եւ բարեխիղճ ուսուցիչ, եւ Եմբի
վարդապետը: Վերջինս ինչդրել է որ իրան ընդ
միջառ ազատեն հոգեւոր աստիճանից:

Հեռացված եւ հրաժարված ուսուցիչների տեղ
հրաւիրված են առ այժմ՝ պ. պ. Նալբանդեան
եւ Աւետեան, իսկ միւսների տեղը զեռ եւս
ազատ է:

Անորոշ է եւ ուսուցչական նախկին խմբից
մնացած ուսուցիչների վիճակը, որովհետեւ
պակասեցրած ռոճիկով անկարող են համարում
ապրել Վաղարշապատում:

Արիստ

ՆԱՄԱԿ ԽՐԱՄԱԳՐՈՒԹԱՆ

Կաղզվան, սեպտեմբերի 19-ին

«Մշակի» 200—202 համարներում պ. պ. Իսա-
հակեան եւ Մեջլեան, գաղթականներին դէպի
սահմանադուր ուղեկցողները, յայտնեցին, որ
գաղթականների մէջ երեւացել են հիւանդու-
թեան դէպքեր, որոնց տարածվելու առաջն առ-
նելու համար ինձ հրաւիրած են Կաղզվանից
Բասեն, եւ ես անկարող եմ գտնվել զնայու:

Թիւրքմանցութիւնների առաջն առնելու հա-
մար եւ առիթ չը տալու գործին անտեղեակ
անձանց կարծելու, որ ես խոյս եմ առնել կա-

տարել մի սուրբ պարտականութիւն, հարկա-
ւոր եմ համարում յայտնել, որ ստանալով գը-
րաւոր հրաւեր պ. Իսահակեանից գալ Բասեն,
եւս պատասխանեցի, որ անձնական գրութեան
հետ կապված մի քանի հանգամանքների չնոր-
հիւ, որոնց մասին լրագրում չեն խօսում, ան-
կարող եմ գալ մասնաւոր կերպով, քայլ
պատրաստ եմ գալ եւ ձեռքիցս եկած օգնու-
թիւնն հասցնել գաղթականներին, ինչպէս ա-
րած եմ այդ 96—98 թ. գաղթականութեան
ժամի տարիներին—սակայն այժմ կարող եմ
գալ պաշտօնական կերպով, պ. գաւառագետի
գիտութեամբ եւ առաջադրութեամբ: Սրա
համար խորհուրդ տուի պ. Իսահակեանին դի-
մել Բասենի պրիստաին, յայտնել նրան, որ
գաղթականներին մէջ երեւացել են հիւանդու-
թեան դէպքեր, որոնք հեշտութեամբ կարող են
համաճարակի բնաւորութիւն առնալ, եւ խնդ-
րել՝ հետազոտող զինել Կաղզվանի գաւառապե-
տին եւ բժշկական օգնութիւն խնդրել Հեռա-
գիրը հասցնելու պէս եւ կը գամ Բասեն թէ
ինչեւ պ. Իսահակեանը չը կամեցաւ պաշտ-
ոնական ճանապարհով այդ անելու—եւս չը գի-
տեմ:

Բժ. Գ. Կանկանեան

ՆԵՐՖԻՆ ԼՈՒՐԵՆ

Սեպտեմբերի 25-ին Բաթումից Թիֆլիս կը
հասնի երկրագործութեան եւ պետական կա-
ռուածների մինիստր Երմոլով:

Մեզ խնդրում են յայտնել, որ Աւճալեան
թատրոնում հայոց ժողովրդական ներկայա-
ցումները սկսում են այսօրվանից: Այսօր ներ-
կայացնում են «Ոճաւորների Ընտանիքը»: Այ-
նուհետեւ ժողովրդական ներկայացումները սո-
վորաբար կը լինեն կիրակի օրերը: Ներկայա-
ցումները սկսվում են ժամի 11-ին առաւօ-
տեան: Տեղերի գները 5 կոպէկ եւ 10 կոպէկ:

Բաֆֆի «Խնկիւր» ուսերէն թարգմանվե-
լուց յետոյ, սկսել է լոյս տեսնել եւ վրացե-
րէն լեզուով: Վրաց «Մօմբէ» ամսագրի ութն-
երորդ համարից սկսվեց այդ թարգմանութեան
տպագրութիւնը:

Թիֆլիսում ուրբաթ գիշերը լոյս շաբաթ,
ժամի մերձաւորապէս 3-ին, զգալի եղան երկ-
րաշարժի զննումներ, որոնք սակայն ոչ մի նը-
կատելի վնաս չը հասցրին:

Բազուի «Բասիւ» լրագիրը հազորդւում է,
որ հայոց թատրոնական ներկայացումները
Բազում կը սկսվեն հոկտեմբերի 1-ից: Լրա-
գիրը զրա հետ ցաւ է յայտնում, որ խմբի
մէջ չը կան հասարակութեան սիրած եւ ա-
ռաջակարգ դերերի համար միակ հայ դերա-
սաններ—տիկին Սիրանոյշ, պ. Արեւիկա եւ
Պարտուկան Որ. վերջին երկուսը չը կան Բա-
զուի խմբի մէջ՝ այդ հասկանալի է, քանի որ
նրանք այժմ Թիֆլիսի խմբի մէջ են: Բայց որ
տիկին Սիրանոյշն էլ չը կայ խմբի մէջ, այդ
արդէն նորութիւն է: Եւ այս նորութիւնը
նշանակում է, որ կովկասեան հայերը, յան-
կարծ, միանգամայն հասկացել են, որ տիկին
Սիրանոյշը հարկաւոր չէ հայոց բեմին: Ոչ
Թիֆլիսը, ոչ Բազուն արժան չը համարեցին,
որ տաղանդաւոր դերասանուհին բեմ գուրս
զայ: Ինչ է առ նշանակում—հասարակ չկամու-
թիւն, թէ կայ մի ուրիշ լուրջ պատճառ: Հար-
կաւոր է, յամենայն դէպի, որ հասարակու-
թեան իմանալ այս տարօրինակ եղելութեան
ընդ պատճառը: Եւ եթէ թատրոնի ղեկավար-
ները չեն ուզում բացատրել, ինքը, տիկին Սի-
րանոյշը չի բարեհաճի պատմել մեզ, թէ ինչեւ
է նա հայկական բեմից հեռանում կամ հե-
ռացնվում:

«Призовек. Край» լրագրին հեռագրում են
Պետերբուրգից, թէ հայորդակցութեան ճա-
նապարհների մինիստր Իշխան Խիլով ճանա-
պարհ է ընկել դէպի Կովկաս:

Սեպտեմբերի 19-ին Թիֆլիսի նահանգական
ատենը, ընկնելով Թիֆլիսի քաղաքային ու պ-
րավայի որոշումը ընտրողների մասնակցութեան
իրաւունքի մասին ընտրողական զանազան շըր-
ջաններում եւ Ն. Թամաշեանի զանգուար այդ
որոշման դէմ: Վնեց, —1) ու պրավայի որո-
շումների առաջին կէտը, որի համաձայն քա-
ղաքային ապառիկները չը վճարեցին համար
ընտրողական ցուցակներին մէջ չը մտնված առ-
ձինք կարող են մասնակցել ընտրութիւններին
ուրիշի հաւատարմագրով կամ խնամակալի
ցցիցով, ընդունել անհամապատասխան քաղա-
քային կանոնադրութեան 33-րորդ յօդուածին: 2)
ընդունել, որ երկու ընտրողական շըջաններում

ձայն ունեցող անձինք կարող են քուէարկվել
երկու շըջաններում եւս: 3) ընդունել, որ քա-
նազան ընտրողական շըջաններում երկու ձայն
ունեցողները, եթէ չեն ընտրվում մի շըջանում,
կարող են քուէարկվել միւս շըջանում: 4) ըն-
դունել օրինաւոր չորրորդ կէտը, որով մի շըր-
ջանում նախնական ընտրութիւնների ժամա-
նակ չընտրված անձը կարող է երկրորդ անգամ
քուէարկվել լրացուցիչ ընտրութիւնների ժամա-
նակ միեւնոյն շըջանում:

Մեզ հաղորդում են, որ առաջիկայ շաբաթ
օրվանից կը սկսվեն ուսուց գրաւատարական
խմբի ներկայացումները: Շաբաթ օր, սեպ-
տեմբերի 28-ին, կը ներկայացնել Օտարովսկու
«Последняя Жертва» պիեսը, իսկ այնուհե-
տեւ կը շարունակվեն կոմսուար կերպով ա-
մեն օր բացի երկուշաբթի օրերից, երբ հայոց
ներկայացումներն են տեղի ունենում եւ չո-
րեքշաբթի օրերից, որոնք նշանակված են Ար-
տիստական ընկերութեան սիրողների ներկայա-
ցումների համար: Կիրակի օրերը կը տրվեն
նաեւ ցերեկվայ ներկայացումներ էժանացրած
գնեցով: Մարգարծ ընկերությունը մէջ կան Եր-
թիֆլիսցիներին դեռ անձնաթի պիեսներ:

Հինգշաբթի, սեպտեմբերի 19-ին, Թիֆլիսից
դէպի Կամենեյ Պոդոլսկ ուղեւորվեց վրաց
եպիսկոպոս Կիրիլ, որ նշանակված է Բալ-
տեան թեմի կառավարիչ:

Կ. Չուբայովի անունով չինվելիք ժողովրդա-
կան տան հիմնարկութիւնը տեղի կունենայ
առաջիկայ երեքշաբթի, սեպտեմբերի 24-ին:
Առանձին հանգէս չի կատարվել այդ առիթով:
Հիմնարկութեան ներկայ կը լինեն միայն ժո-
ղովրդական տան կառուցման համար ընտրված
կոմիտէի անդամները:

Սեպտեմբերի 14-ին յայտնվեցին այն քննու-
թիւնների հետեւանքները, որոնք տեղի են ու-
նեցել Պետերբուրգի գեղարուեստական ուկա-
րիային կից գտնվող գեղարուեստական
հիմնարկից զարգացում Հետեւանքը, ինչպէս
հաղորդում են մայրաքաղաքի լրագիրները, մի
չը տեսնված բան էր. 78 հոգուց, որոնք քնն-
նութիւն էին բռնում ճարտարապետական եւ
գեղարուեստական բաժանմունքներում, ոչ ոք
չը կարողացաւ ընդունվել: Ընդունվեց միայն մի
աշակերտուհի, եւ այն էլ որպէս ազատ—ուն-
կնիքի:

Ներքին գործերի մինիստրութեան գաղթա-
կանութեան բաժանմունքի կառավարիչ Ա. Կիրի-
լովչին Պետերբուրգից սեպտեմբերի 14-ին
ճանապարհ է ընկել դէպի Կովկաս՝ ծանօթա-
նալով մի քանի հարցերի հետ, որոնք վերաբը-
րում են Կովկասում ուսուցական գաղթականու-
թիւնների հիմնելու գործին: Ա. Կիրիլովչին մօտ
օրերում կը հասնի Թիֆլիս:

ԱՆԱԿԱՎԱՔԻՑ ԻՆԵՂ ԳՐԵԱՄ ԷՆ. «Գիւղա-
տեսի» Սահակեան շարունակ երկու ամիս մեր
գաւառում էր: Ինչպէս յայտնի է, նա աշխա-
տում էր իր գտած պարագիծը պատուաւոր
մուկի ձուլիկներին: Փորձերը աջող անցան, եւ
յարգելի գիւղատնտեսը կարողացաւ վարակել
մուկի տեղական տեսակը Հիւսիս մնում է
որոշել, թէ մի եւ նոյն պարագիծով եւ մի եւ
նոյն ձեւով կարելի կը լինի վարակել նաեւ
ուրիշ երկրների մուկների տեսակները, պ.
Սահակեան՝ օգտվելով բարեպատեհ հանգա-
մանքներից՝ ամեն տեղ եւ ամեն ժամանակ
խօսում էր թէ անմիջապէս գիւղացիների եւ
թէ նրանց մօտ կանգնած ինտելիգենտ անձանց
հետ՝ գիւղատնտեսական խելացի ձեւերի եւ
առհասարակ գիւղացու բարօրութեանը նպաս-
տող միջոցների մասին, եւ նպատակաւորաբար
խորհուրդներ էր տալիս: Սա, ի հարկէ, ամեն
մի իսկական եւ բարեխիղճ ինտելիգենտի եւ
մասնագէտի անխուսափելի պարտքն է: Բայց
մեր բարոյական անապատում այդպիսի ժողո-
վրդապէս եւ լուրջ պատրաստութիւն ունեցող
անձնաւորութիւնները այնքան հազուադէպ են,
որ գիտաւորների նման են երեւում այս կամ
այն գաւառում: Այն ինչի մենք մասնաւոր չենք
անում պ. Սահակեանին՝ նրա արագաւ վերա-
բերմունքի առթիւ դէպի ժողովրդի ցաւերը եւ
գիւղատնտեսական հարցերը Վերջը պ. Սահա-
կեանը ուզում էր, իր գիտողութիւնների առի-
թով, մեր քաղաքում զատաւորութիւն կարող
գիւղատնտեսական բովանդակութեամբ, բայց
այդ բանը նրան չաղողվեց անկախ պատճառով:
որի համար միայն ցաւել եւ արտասպ կարելի
է, քանի որ գիւղատնտեսական գիտելիքները

ներկայումս շատ անհրաժեշտ են դառնել մեր
մասսայի համար:

ՂՈՒԲԱՅԻՑ ԻՆԵՂ ԳՐԵԱՄ ԷՆ. «Անձրեւը այսօր
5-րդ օրն է, որ տեղում է, գոյացնելով անա-
ցանկի ցեղեր փողոններում: անձրեւները սառ-
տիկ իջնորդի ցորենի գինը, որը հիմա ծախվում
է պուլը 70 կոպէկով:

ԱՆԱԿԱՎԱՔԻՑ ԻՆԵՂ ԳՐԵԱՄ ԷՆ. «Մօտ օրերս
մի խոնութիւն մէկի ձեռքի ատրճանակը բաց-
վում է անգգուշութեամբ եւ մի թուշի վրա-
ւորում: Խեղճ օտարականը ապա գիւղերական
հիւանդանոցում վախճանվեց:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՄՈՒԹԻՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻՍՈՒՅԻՑ

Խոտրվուր գիւղ, օգոստոսի 20-ին
Պատասխանատուութիւնը մեր վրա առնելով
յատկապէս կը խնդրեմք ձեր լրագրի էջերի մէջ
տեղ տալ հասարակական դործերի պատկանող
մեր այս մի քանի տողերուն:

Ինչպէս չը կայ մէկ տեղ, որ կուսակցու-
թիւն չըլլայ, նոյնպէս եւ ինչի է մեր էրգում
մի նահանգի Խոտրվուր գեղի հասարակութեան
մէջ: Մենք ազոր համար չէ, որ կը ցաւինք,
այլ անոր համար միայն, որ մեր մէջէն երեւն
դուրս կը գան այնպիսիները՝ որոնք իրենց գո-
ղութիւնը, կապաւորութիւնը յաղոցեցնելու
համար, հասարակութեան անդամներէն մարդ
հաւաքելով կուսակցապետ կը դառնան, ու գո-
ղութեանց, կապաւորութեանց դէմ յարձակ-
վելու անունով ճարտարութիւն, ճարտարութիւն
կաղաղակեն:

Եթէ այդ ընէ մասնաւոր անհատ, անշուշտ
կըսուի թէ՛ դատապարտելի է այդ արարք: Իսկ
եթէ այդ ընէ հոգեւորականը, ժողովուրդին
բարոյականութեան առաջնորդը վարդապետը,
ազոր ինչ պիտի ըսուի:

Այդ պէտք է հարցնել մեր հասարակութեան
համար յատկացված Ս. Վ. Զ., որ իշխալ ուղ-
ղութեամբ չը դադրեցաւ գործել Կ. ք. Զ.-ի
դէմ: Ի հարկէ նա կը լուէ, բայց իրական-
ութիւնը լուս չի մնար, կը խօսի: Թողունք
որ խօսի:

Խոտրվուրի Միսիրկուտ թաղի հասարակու-
թիւնը իր ծախսով եկեղեցի չինել կը տար եւ
ուրիշ պատրաստութիւնների հետ ունէր եւ
կիր, որը ճարտարութեան անունով զողո-
թեան, կապաւորութեան դէմ յարձակվող
Զ. Վ. առանց ամօթի ու խղճահարութեան
գիշերները գաղտնի տանելու չը քաշուե-
ցաւ, ու եկեղեցու պատկանելի ըստուն
օսմանեան իրայի կիր իր սեպակաւան չն-
քին գործածելու յատկացրեց հանգիստ սըր-
տով: Զը պէտք է մոռանալ, որ իր արարքը հե-
տեւորին էլ ունեցաւ:

Այս գողութիւնը ժամանակին բացգիտաւ
մենք ազոր համար բողոք տուինք տեղական
դատաւոր միւլիքին եւ մեր հոգեւոր առաջ-
նորդին, բայց եկեղեցին ոչ մի իրական օգու-
տ չը կրցաւ ստանալ, ու գործը այդպէս էլ երեւի
վրա մնաց, թէ եւ հասարակութեան հետ մի-
դիրն էլ, առաջնորդն էլ իմացան այս եղելու-
թեան ստուգութիւնը:

Հիմա այս տողերը այն պատճառով գրեցինք
որ ցոյց տանք, թէ մեր մէջ ինչպիսի հոգեւո-
րականներ էլ կը գտնուին, որոնք ճարտարու-
թեան անունը շահագործելով կը մոլորեցնեն
հասարակութիւնը բարոյապէս եւ կը վնասեն
նիւթապէս:

Գ. Գ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՆ

Սօֆիայի «Дневник» լրագրին հաղորդում
է, թէ Բուլղարիայի ազատութեան քանակները
ամենակի առիթով պատուաւոր քաղաքացի
ընտրված կուս իգնատեւ Սօֆիայում, գնեցի
Ստոլետով—Գարբովում եւ գնեցի Դրաբով-
ով—Սիւտովովում: Շրջակայի հանդէսների
ներկայ գտնված ուսուցչի հիւրերից միայն կոմ-
իտեանից կայացել քաղաքական մայրաքաղա-
քը: Սօֆիայի լրագիրներին ասելով, մայրաքա-
ղաքի գուման առանձին մասնաժողով է ըն-
տրել մշակելու հանդէսների մի ծրագիր կոմ-
իտեանից ընդունելու համար Մտադրու-
թիւն կայ կոմիտե գալտեան օրը քաղաքի
քաղաքը քաղաքական եւ ուսական դրօշակնե-
րով, կանաչով, յաղթական կամարներով, իսկ
երեկոյան լուսավորութիւնը Ութ հազար ուսանող-
ներ եւ աշակերտներ ջահնթաքը կը կազմեն
այն տան առաջ, որտեղ պէտք է իջեանի կոմ-
իտեանից:

Սօֆիայից հաղորդում են «Белградско
Новине» լրագրին, թէ Միսիրկուտում կաղ-

Электротехническая Школа. Издат. Т-ва. В. Визинский и др.